ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բերի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 28-Ն

ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 27.06.2013 թվականի թիվ 661-Ն և 18.07.2013թվականի թիվ 781-Ն որոշումներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Համայնքի 2013 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1)համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 8120.2հազար դրամ գումարի չափով և սահմանել՝

ա)եկամտային մասը՝ 175596.70 հազար դրամ

բ)ծախսային մասը՝ 175596.70 հազար դրամ

2)բյուջեի եկամտային մասում ավելացնել ընթացիկ սուբվենցիայի տողը՝ 8120.2 հազար դրամ գումարի չափով, համաձայն N 1 հավելվածի.

3)բյուջեի ծախսային մասում տեղական ինքնակառավարման, համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ,,Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ,, /4111/ հոդվածն ավելացնել 7706.2 հազար դրամ գումարի չափով, ,,Էներգետիկ ծառայություններ,, /4212/ հոդվածը՝ 414.0 հազար դրամ գումարի չափով, համաձայն N2 հավելվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1

Բերդ համայնքի ավագանու

2013 թ. օգոստոսի 23-ի
N 28 -Ն որոշման

2013 թվականի համայնքի տեղական եկամուտներն ըստ առանձին հոդվածների

Հ/հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ	/հազար դրամ/
	ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	6000,0
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	13000.00
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3000.00
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	4500.00
5	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1000.00
6	ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ	4000.00
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	10500.00
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	4000.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	46000,00
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	
9	ԴՈՏԱՑԻԱ	111083,40
10	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	2132.80
11	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2655.0
12	ԿԱՊԻՏԱԼ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	2000.00
13	ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ	8120.20
	ԸՆԴԱՄԵՆԸ	125991.40
14	ՏԱՐԵՄԿՋԲԻՆ ԱՋԱՏ ՄՆԱՑՈՐԴ	3605.3
15	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	3605.3
16	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	
	ԱՄԲՈՂՋԸ	175596.70

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

Հավելված 2

Բերդ համայնքի ավագանու
2013 թ. օգոստոսի 23-ի
N 28 -Ն որոշման

Համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 2013թ.

Հ/Հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	/հազար դրամ/
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	41454.2
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	21498.6
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՍՊՈՐՏ	21616.2
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ	16282.5
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	54422.4
6	ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ	1000.0
7	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	500,0
8	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	4605,3
9	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ մաս	1782.5
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2655,0
11	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	2780.0
12	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4500.0
13	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	2500,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	175596.70

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 29-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով

համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի բյուջեի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 2

Բնդի համայնքի
ավագանու 2013 թվականի
օգոստոսի 23-ի N 29-Ա որոշման

2013թ. երկրորդ եռամսյակում համայնքի տեղական բյուջեից հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	Տարեկան ծախսերի նախահաշիվ	2013թ. 2-րդ եռամսյակ		
			Նախատեսված ծախս	Փաստացի կատարվել է	Կատարման %
1	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ	40225.0	23020.0	19037.3	82.70
2	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	19030.0	5940.0	5770.0	97.14
3	ՄՇԱԿՈՒՅԹ և ՄՊՈՐՏ	19876.0	9900.0	9536.8	96.33
4	ԲԵՐԴԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ, Արվեստի դպրոց	15234.2	7437	7012.2	94.29
5	ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	52788.5	26394.2	25376.0	96.14
6	ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ	1000.0	500.0	0.0	0.00
7	ՍՈՑ ԾԱԽՍԵՐ	500.0	965.0	965	100.00
8	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	4605.3	2300.0	0.0	0.00
9	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ մաս	1782.5	450.0	0.0	0.00
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2655.0	1194.5	1195.9	100.12
11	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	2780.0	1300.0	787.7	60.59
12	ԱՅԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4500.0	3250.0	116.8	3.59
13	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	2500.0	2500.0	2500.0	100.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	167476.50	85150.70	72297.70	84.91

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

Հավելված 1
Բերդի համայնքի
ավագանու 2013 թվականի
օգոստոսի 23-ի N 29 -Ա որոշման

2013 թվականի երկրորդ եռամսյակի եկամուտների կատարման մասին

Հ/հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ	Տարեկան պլան /հազ.դրամ/	2013թ. 2-րդ եռամսյակ		
	ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		Պլան	Փաստացի	Կատարման %
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	6000.00	3000.00	3003.00	100.10
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	13000.00	7200.00	5679.20	78.88
3	ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ	3000.00	1500.00	1530.20	102.01
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	4500.00	2250.00	2162.80	96.12
5	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1000.00	500.00	674.00	134.80
6	ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐ	4000.00	2000.00	2404.10	120.21
7	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	10500.00	5250.00	5155.00	98.19
8	ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	4000.00	2000.00	1270.60	63.53
	ԸՆԴԱՄԵՆԸ	46000.00	23700.00	21878.90	92.32
	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ				
9	ԴՈՏԱՑԻԱ	111083.40	55541.70	55541.70	100.00
10	ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2655.00	1194.50	1194.50	100.00
11	ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ	2132.80	1002.40	1002.40	100.00
12	Կապիտալ սուբվենցիա	2000.00	2000.00	2000.00	100.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	117871.20	59738.60	59738.60	100.00
13	ՏԱՐԵՄԿՋԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	3605.3			
14	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	3605.3			
15	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ				
	ԱՄԲՈՂՋԸ	167476.50	83438.60	81617.50	97.82

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 30-Ա

ԼԻԶԻՆԳՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի գյուղատնտեսության զարգացման խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկա: ՓՄՁ ներդրումներ ՈՒՎԿ ՓԲԸ-ն համայնքներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա՝ շահավետ պայմաններով: Համայնքի համար առաջնահերթություն է մի շարք գյուղատնտեսական սարքավորումների՝ կուլտիվատոր, սերմնացան, գութան, խոտհնձիչ, ձեռք բերումը: Համայնքի ղեկավարն առաջարկում է 20% կանխավճարով, 3միլիոն 650 հազար դրամով, 3 տարի մարման ժամկետով գնել անհրաժեշտ տեխնիկան:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է

Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերումը համարել առաջնահերթություն և ներկայացնել լիզինգի հայտ, 20% կանխավճարով, 3միլիոն 650հազար դրամով, 3 տարի մարման ժամկետով, գյուղատնտեսական սարքավորումներ՝ կուլտիվատոր, սերմնացան, գութան, խոտհնձիչ ձեռք բերելու համար:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 31-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բերդ քաղաքի բնակիչ Վասիլ Հովհաննեսի Ղազարյանը դիմել է Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Սարալանջի 15 հասցեում գտնվող բնակելի տունը անհատույց իրեն փոխանցելու խնդրանքով: Բերդ քաղաքի Սարալանջի 15 հասցեում գտնվող բնակելի տունը նախկինում սեփականության իրավունքով պատկանել է Վասիլ Ղազարյանի հանգուցյալ հորը՝ Հովհաննես Ղազարյանին: Վասիլ Ղազարյանը ծնվել, մեծացել, բնակվել և այժմ էլ ընտանիքով բնակվում է այդ տանը: Հովհաննես Ղազարյանի մահից հետո, ըստ նրա կտակի, տունը սեփականության իրավունքով գրանցվել է նրա երկրորդ կնոջ՝ Աշխեն Ղազարյանի անունով: Աշխեն Ղազարյանի մահից հետո Սարալանջի 15 տունը ձեռք է բերել անժառանգ գույքի կարգավիճակ և Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 27.03.2013թ. թիվ ՏԴ 1-0029/02/13 վճռի համաձայն դարձել Բերդ համայնքի սեփականությունը:

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի առաջին մասով, 595-րդ հոդվածով և հաշվի առնելով վերոգրյալն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է

1.Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը, Բերդ քաղաքի Սարալանջի 15 հասցեում գտնվող բնակելի տունը՝ 0.10688հա հողամասով, անհատույց փոխանցել Բերդ քաղաքի բնակիչ Վասիլ Հովհաննեսի Ղազարյանին:

2. Կնքել գրավոր նվիրատվության պայմանագիր Բերդ քաղաքի Սարալանջի 15 հասցեում գտնվող բնակելի տունը՝ 0.10688հա հողամասով, Վասիլ Հովհաննեսի Ղազարյանին հանձնելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 32-Ա

„ԱՐՄԵՆՏԵԼ„ ՓԲԸ-ԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով

Համայնքի ավագանին որոշում է

„Արմենտել„ ՓԲԸ –ին կապի ծառայություն մատուցելու համար տրամադրել 250 000 դրամ գումար՝ համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից:

Այդ նպատակով համայնքի վարչական բյուջեի պահուստային ֆոնդի /11.01.02.51/ պահպանման ծախսերի նախահաշվի „պահուստային միջոցներ„ /4891/ հոդվածից 250.0 հազար դրամ գումար ուղղել քաղաքապետարանի /01.01.01.51./ պահպանման ծախսերի նախահաշվի „կապի ծառայություն„ /4214/ հոդվածի:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 33-Ա

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 27.06.2013 թվականի թիվ 661-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է

Քաղաքապետարանի աշխատակազմի և համայնքի բյուջետային հիմնարկների հաստիքների դրույքաչափերում կատարել փոփոխություններ և հաստատել դրույքաչափերը համաձայն N1, N2, N3, N4 և N5 հավելվածների:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

Հավելված 1
Բերդի համայնքի ավագանու
2013 թվականի օգոստոսի 23 -ի N 33 -Ա որոշման

ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 25

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը/ՀՀդրամ/
	Համայնքի ղեկավար	1	231000
	Հայեցողական պաշտոններ		
	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	114000
	Համայնքի ղեկավարի օգնական	1	85150
	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	73585
	Համայնքային ծառայողներ		
	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	111700
	Ֆինանսատնտեսագիտական բաժին		
	Բաժնի պետ 2.1-2	1	102500
	Առաջատար մասնագետ 3.1-1	1	62040
	Առաջին կարգի մասնագետ 3.2-9	1	59524
	Առաջին կարգի մասնագետ 3.2-1	1	59524
	Առաջին կարգի մասնագետ 3.2-7	1	59524
	Ներքին աուդիտի բաժին		
	Բաժնի պետ 2.1-3	1	102500
	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Բերդի տարածքային բաժին		
	Բաժնի պետ 1.3-1	1	139500
	Առաջին կարգի մասնագետ 3.2-10	1	64250
	Աշխատակազմ		
	Գլխավոր մասնագետ 2.3-2	1	96680
	Գլխավոր մասնագետ 2.3-3	1	96680
	Գլխավոր մասնագետ 2.3-4	1	96680
	Առաջատար մասնագետ 3.1-7	1	62040
	Առաջատար մասնագետ 3.1-6	1	62040
	Առաջատար մասնագետ 3.1-3	1	62040
	Առաջին կարգի մասնագետ 3.2-3	1	59524
	Քաղաքացիական աշխատանք իրականացնողներ		
	Քաղաքացիական պաշտպանության շտաբի տեսուչ	1	59524
	Գնումների համակարգող	1	73585
	Տեխսպասարկման անձնակազմ		
	Վարորդ	1	73585
	Հավաքարար	2	59524

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2013թ. օգոստոսի
23-ի N 33-Ա որոշման

Բերդի արվեստի դպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ *6*

Բերդի արվեստի դպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	3	5	4	6
1	Տնօրեն	1	73600	73600
2	Նկարչության դասատու	1	65155	65155
3	Գորգագործության դասատու	1	59524	59524
4	Նկարչության դասատու	1	59524	59524
5	Գանձապահ	0.5	59524	29762
6	Տեխն.աշխատող	1	59524	59524

Աշխատակազմի քարտուղար *Ա. Մաճկալյան*

Հավելված 3
Բերդ համայնքի ավագանու
2013թ.օգոստոսի23-ի N33-Ա
որոշման

Բերդի քաղաքային գրադարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 2

Բերդի քաղաքային գրադարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	73600	73600
2	Գրադարանավարուհի	1	59524	59524

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

Հավելված 4
Բերդ համայնքի
ավագանու 2013թ.
օգոստոսի 23-ի N 33-Ա
որոշման

Բերդի պատմության և կենցաղի թանգարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

Բերդի պատմության և կենցաղի թանգարանի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	2	3	4	5
1	Տնօրեն	1	73600	73600
2	Ցուցասրահի հսկիչ	1	59524	59524
3	Ֆոնդապահ	1	59524	59524
4	Էքսկուրսավար	1	59524	59524
5	Գիտ.հավաքչական աշխատանքների կազմակերպիչ	1	59524	59524
6	Տեխնիկական աշխատող	1	59524	59524
7	Պահակ	1	59524	59524

Աշխատակազմի քարտուղար Ա. Մանկալյան

Հավելված 5

Բերդ համայնքի ավագանու
2013թ. օգոստոսի 23-ի N 33 որոշման

Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների թվաքանակը՝ 10

Բերդի մանկապատանեկան մարզադպրոցի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 9

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը /դրամ/	Ամսական աշխատավարձ /դրամ/
1	3	5	4	6
1	Տնօրեն	1	88300	88300
2	Մարզիչ	0.5	59524	29762
3	Մարզիչ	0.85	59524	50595
4	Մարզիչ	0.85	59524	50595
5	Մարզիչ	0.85	59524	50595
6	Մարզիչ	1	79400	79400
7	Բուժքույր	1	59524	59524
8	Տնտեսվար	1	59524	59524
9	Տեխնիկական աշխատող	2	92,600.00	92,600.00

Աշխատակազմի քարտուղար Ա. Մաճկալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բերդի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 34-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 0.2 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդված 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է

Համայնքի սեփականությունը հանդիսացող „Երդանի գլուխ„ կոչվող հանդամասում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0,2հեկտար մակերեսով խաղողի այգին, ծածկագիրը՝ 11-002-0319-0003, բազմամյա տնկարկներ, օտարել աճուրդով:

Մեկնարկային գինը սահմանել 320750 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 35-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 0.13 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է

1.Համայնքի սեփականությունը հանդիսացող „Գյոլեր„ հանդամասում գտնվող 0.13 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը՝ ծածկագիրը՝ 11-002-0272-0022, օտարել աճուրդով:

Մեկնարկային գինը սահմանել 130 000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, ք. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 36-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԽԱՌԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդված 20-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է

Բերդ քաղաքի Մաշտոցի 57/1 հասցեում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 89.1 ք.մ մակերեսով բնակավայրերի խառը կառուցապատման հողամասը, ծածկագիրը՝ 11-002-0098-0044 օտարել աճուրդով:

Մեկնարկային գինը սահմանել 150 000 դրամ:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 37-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐՎՈՂ 3 ԱՎՏՈՏՆԱԿԸ, 1 ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006 թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի գ) ենթակետով և 34-րդ կետով՝

Համայնքի ավագանին որոշում է

1. Մաշտոցի 3/2 հասցեում գտնվող 53.04/47.04 քմ մակերեսով ավտոտնակը 58344 դրամով, նրա պահպանման ու սպասարկման 419.5 քմ մակերեսով հողամասը 339795 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Հրաչիկ Արամայիսի Գրիգորյանին:

2.Մաշտոցի 21/8 հասցեում գտնվող 9.2/6.9 քմ մակերեսով օժանդակ շինությունը 20240 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 9.2 քմ մակերեսով հողամասը 7452 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ժիրայր Դերենիկի Այվազյանին:

3.Խորենացի 45/45 հասցեում գտնվող 16.4/14.87 քմ մակերեսով ավտոտնակը՝ 18040 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 16.4 քմ մակերեսով հողամասը 13284 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Կարեն Համլետի Մելքումյանին:

4.Մաշտոցի 26/4 հասցեում գտնվող 14.9 քմ մակերեսով ավտոտնակը՝ 16390 դրամով և նրա պահպանման ու սպասարկման 14.9/1.338 քմ մակերեսով հողամասը 12069 դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Թամարա Քոսակյանին:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

1.Բերդի համայնքի սեփականությունը հանդիսացող Լ. Բեկի 5 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի N 13 սենյակը՝ 19.63 քմ մակերեսով, վարձակալությամբ, 2 տարի ժամկետով, տարեկան 240000 ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմին՝ բժշկա-սոցիալական փորձաքննության աշխատանքներ իրականացնելու համար:

2.Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքել տարածքի վարձակալության պայմանագիր:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
Բերդ համայնք, գ. Բերդ Լ. Բեկի 5, հեռ. /0267/ 2-10-81
berdhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2013 ԹՎԱԿԱՆ N 39-Ա

„ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ„ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

համայնքի ավագանին որոշում է

1.Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող Լ. Բեկի 10 հասցեում գտնվող վարչական շենքի 3-րդ հարկի N 12 սենյակը՝ 28.36 քմ մակերեսով, N 16 սենյակը՝ 14.44 քմ մակերեսով, N 15 սենյակը՝ 23.18 քմ մակերեսով վարձակալությամբ, 2 տարի ժամկետով, տարեկան 791760 ՀՀ դրամ վարձավճարով տրամադրել „ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ„ պետական կառավարչական հիմնարկին՝ Բերդի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության գործունեությունն իրականացնելու համար:

2.„ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ„ պետական կառավարչական հիմնարկի հետ կնքել տարածքի վարձակալության պայմանագիր:

Համայնքի ղեկավար Հ. Մանուչարյան